

Ա.Ս. ԴՈՒՇԿԻՆ

ԸՄԽԳԻՍԱՐԱՅԻ
ՇԱՏՐՎԱՆԸ



19. ՀԱՅԴԵՏԿՐԱՆ. 37

А.С.Пушкин

БАХЧИСАРАЙСКИЙ ФОНТАН

ПЕРЕВОД С РУССКОГО
СУРЕН ВАГУНИ



А. С. С. Р. ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН

1937

891.71
7-90

Ա. Պողոսյան

ՀՀԽՍՀՄ 1961 թ.

ԲԱՆԶԻՍԱՐԱՅԻ ԵՎ ՇՐՈՒՄ

ՈՒՍ. ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՍՈՒՐԵՆ ՎԱՅՈՒՆԻ




ՀԱՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԵՆՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

400
A 1545



ԼԱԽԶԻՍԱՐԱՅԻ
ՃԱՏՐՎԱՆԸ





Շատերն, այնպէս ինչպէս չեմ յետ, այցելել են սույն
 շատիկներ, բայց վաճառման մեծացից չկան արդեն. ուրիշներ
 օրջազայում են հետաճանճելում:

Ս ա ա գ ի

Գիրքին եր նստել հայաջեր մուր,
 Բերնին՝ մխացող սաթյա ծխամործ.
 Նունվել եր անկ խանի չորս բոլոր
 Մտրկարարու արքունիքը վողջ.
 Ամեն ինչ խաղաղ, լուռ եր պալատում.
 Յերկյուղածությամբ խոնարհված նրան՝
 Մռայլված դեմքին վշտի ու ցամառ
 Նշաններն ելին ամենքը կարդում:
 Բայց իշխանավորն անհղաղութ
 Ձեռքով անհամբեր նշան է անում.
 Գնում են նրանք խոնարհ ու անխոս:

Մենակ ե նա իր առանձնարանում,
Կուրծքը ավելի ազատ ե շնչում:
Ճակատն ավելի ժիր կենդանու թշամբ
Մատնում ե սրտի հուզումն ահագին:
Այդպես ե ծովի զողողոջ ապակին
Միշտ արտացոլում յերկիրը սեփամպ:


Ի՞նչն ե փոթորկում զոռ հոգին նրա.
Ի՞նչ մտքով ե նա զբաղված արդյոք.
Գնում ե նորից Ռուսիայի վրա՞,
Լեհաստանն ե նա յենթարկել ուզում.
Մտափում ե վոխով արյունածարավ,
Թե իր բանակում նկատել ե դավ,
Լեռնականներեջ ե, արդյոք, սարսում.
Թե Ձենովայի դավերից խարդախ:

Վո՛չ, ճանձրալի յե ուզմի փառքը սին,
Հոգնել ե արդեն բազուկն ահարկու,
Յեւ չի մտածում նա կռվի մասին:



Գուցեն մի անարգ դավաճանութիւն
Մուտք ե գործել իր հարձմը լռին,
Յնի նա--գերութեան դուստրը հնչտասուն
Իր սի՛րտն ե ծածուկ հանձնել զյատրին:

Վո՛չ, Գիրեյ խանի կանայք մշտավախ,
Վոր սիրտ չեն անում մտածել, ցանկալ,
Տրտում անդորրում փթթում են խաղաղ:
Հսկողութեան տակ ալալուրջ ու պաղ,
Ջանճրութի գրկում միշտ անմխիթար
Նրանք չգիտեն դավաճանութիւն:
Պահւում ե նրբանց հրմայքն անվրթար
Հարեմի ստվերում անծայն ու թաղուն:
Աղղպես հարաւի ծաղիկն ե ապրում՝
Հպված ջերմոցի տխուր ապականի:
Ու նրանց համար, հերթով անընդհատ,
Որեր, աճիսներ, տարիք են անցնում,
Իրենց հետ մեկտեղ նրանք աննկատ
Տանում են յն ի սեր, յն ի ջաճնութիւն:



Միանման և ամեն որը ջով,
Ծանր են ժամերը հարեմի ծոցում,
Ուր կյանքն և վարում ծուլությունն անհոգ,
Հաճությն ել այնտեղ րիչ և առկայծում:
Դեռաճաս կիներն այն ցանկանալով
Սրտերը իրենց խարել մի բանով,
Փոխում են անվերջ հագուստներ շրթեղ,
Զրույց են անում, խաղում միատեղ,
Կամ թե ջրերի աղմուկում կայտառ՝
Նրանց թափանցիկ շիթերից վերել—
Սահուն խմբերով՝ զով, խտատերել
Սոսիների տակ շրջում անդադար:
Ներքինին նրանց միշտ հսկում և չար:




Այնտեղ նրանից փախչելն և իզուր.
 Հալացքն իր խանդոտ, լսելիքը սուր
 Հետեւում և միշտ ամեն մի բանի:
 Նրա ջանքերով մտել և այնտեղ
 Հավերժական կարգ: Յեւ կամքն և խանի
 Նրա համար լոկ կանոն ու որոնք.
 Նա չի կատարում նույն բան խստորեն
 Պատվիրանը սուրբ անգամ Ղուրանի:

Նրա չոր հոգին սեր չի աղերասում.
Նա, ինչպես արծան, տանում է, լսում
Ծաղր, ատելություն, խոնարհ աղաչանք,
Վիրավորանքներ, չարանքի խաղ.
Հալացրենք յերկշուտ, խաղաղ հառաչանք,
Չար արհամարհանք, ախտունջներ նվաղ.



Հայտնի յն նրան բարբր կանաչի.
Յնի՛ գիտն փորձով՝ նննգ և նա վորքան,
Թն գերության մեջ, թն ազատության.
Քնքուշ հայացքը, յնի՛ անխոս լացի
Կշտամբանքները չեն տիրապետում՝
Ձեն իշխում բնավ նրա չար հոգուն.
Նա նըրանց արդեն ել չի հավատում:

Յերբ յերիտասարդ կիները գերի,
Արձակած իրենց մագերը շքեղ
Լողանալու յեն գնում շողերին,
Յնի՛ յերբ թափվում և նրանց նըբագեղ
Մարմնին սառնորակ ջուրն աղբյուրների,—
Այդտեղ և նրանց անբաժան ծառան
Ու դիտում և նա աչքով անտարբեր
Գեղանի կանանց խումբը մերկիրան:




Անձան րայլերով զիշերը խավարի
Թափառում և նա հարեմում՝ անբուն,
Գորգերն և կոխում նա ըզգուշարար,
Դռների յետեւ կանգնում և թաղուն,
Մանիքից մանիք և անցնում անձայն
Ու միշտ հողատար հսկում խանական
Կանանց հանգիստը՝ փարթամ, վեհանիւջ:
Գիշերվա ամեն թոթովանք ու շունչ,
Սարսուռ կամ հառաչ, ամեն-ամեն ինչ
Նկատում և նա յեւ ազան լսում:
Յեւ վայ և նրան, ով վոր յերագում
Ռարիշի անուն շշնջա մի որ,
Կամ թե քարեհաճ իր ընկերուհուն
Վատանի իրեն մտքերն արտաւոր:



Ել ի՞նչ ե վիշտը ճնշում Գիրեյին.
Ծխամորճն արդեն հանգել ե ձեռին.
Լուռ, նշանի յե սպասում դռան մոտ՝
Իր շունչը պահած, անշարժ ներքինին,
Տերը մտազբաղ՝ վոտրի յե կանգնում.
Նրա հանդիման անա դուռը բաց,
Գեպի կազարանն ե անխոս դիմում՝
Վոչ վաղուց իրեն սիրելի կանանց՝

Յեւ յազանելով հայտնվելուն խանի,
Խռնված անիւրին ժիր շատրվանի,
Գորգերի վրա՝ մետաքսանկար
Կանաչը նստաւ խմբերով՝ կայտաւ
Հետեւում ելին մանկան խնդրել յամբ,
Թե ինչպէս վարում—ջրերում հատակ,
Մարմար հատակին ծուկն և լողում ծուլ,
Ու նստում ելին ձկնիկին, գիտմամբ,
Վրմանը նրանցից գնդեր վռակծուլ:





Մինչ ատրկունիք չորս կողմից նրանց
Մատուցում էին անուշ ոշարակ,

Ու նրանց զնգուն խմբերգից հանկարծ
Քնդաց հարեմի շենքը բովանդակ:





ԹԱԹԱՐԱԿԱՆ ՅԵՐԳ

1

«Արցունքի, վշաի փոխարեն մարդուն
Յերկիրը վերուստ հատուցում և լի-
Յերջանիկ և խեղճ լիակերև ել անտուն,
Թե ծերանալով՝ Մեքքա այցելի»

2

Ով սրբագործի վեճ Դանուբ գետի
Յեզերքն իր մահով—յերջանիկ և նա.
Կրբոտ ժրպխով կույսը դրախտի
Նրան ընդառաջ պիտի սլանա,

3

Բայց նա չե, Զարեմ, յերջանկագունն մարդ-
Ով վոր սիրելով հեշտանք ու անդորր,
Կզգվի, անուշ, քեզ, ինչպես մի վարդ,
Այսանդ—հարեմի լուռթխան մեջ խորք»

Յերգում են։ Բայց նա— Զարեմն ու՞ր ե, ու՞ր.
Աստիկը սիրո, զարդը հարեմի.
Ավա՛ղ, նա նստած գունատ ու տխուր,
Դովերգը նրանց չի լսում հիմի,
Աքմավենու պես՝ նկուն, հողմածառ,
Դյուխն իր ջահել խոնարհել և վար,
Զի գալիս աչքին վռչինչ աշխարհում
Զարեմին Դիրենն արդեն չի սիրում։

Նա դավաճանեց... Բայց քեզ հետ այն ո՞վ,
Զքնաց վրացուհի՛, կմրցի զեղով:
Բո շուշանախալ հակատի քոլոր
Ծամերդ ես հյուսել դու կրկնավորոր,
Զույգ աչքերը քո՝ սեվ ու հրմայիչ
Մութն են գեշերից, ցերեկից ել ջինջ




Ո՞ւմ ծայնն ե մատնում ավելի ուժգին
Վառվող ցանկության պոռթկումները ըոց,
Ո՞ւմ գըզվանքներն են այնքան խորախոց,
Քան քո համբույրը ջերմ ու բնքշագին:
Ի՞նչպես սիրտը այն, վոր լի յն բեզմով
Կարող ե տրոփել ուրիշի համար,
Բայց Գիրեյն անհոգ ու դաժանաբար
Արհամարհեց քո գեղը հոգեթով:
Ու ցուրտ ժամերին իր գիշերային
Նա միշտ ել մենակ, մռայլ ե լինում,
Այն որից, յերբ վոր լեճ իշխանուհին
Փակված ե անդարձ նրբա հարեմում:

Վաղուց չեր, ինչ վոր մանկամարդ Մարին
Աչք հառեց ոտար յերկնակամարին,
Վաղուց չեր, նա իր գեղով դուրեկան
Ծաղկում աշխարհում իրեն հարազատ:
Հպարտ նրանով՝ հայրը ալեզարդ
Իր սփոփանքն եր համարում նրան,
Յեւ նրա կամքը պատանեկական
Պետք ե հոր համար միշտ որենք լիներ:
Ու նրբա միակ հոգան իր մշտապես,
Վոր բախտը իրեն սիրելի զստեր
Պարզորոշ լիներ զարնան որվա պես,

Վեր նու յնիսկ վշտերն ա յն վայրկյանական
Զմռայլելին աղջրկա հոգին,
Յեւ ամուսնացած լինելով անգամ
Խանդադատանքով հիշեր նա կրկին
Որերն հաճույքի, որերն աղջկական՝
Անցած՝ դյուրասաց յերազի նման,
Դյուլթում եր ժարդու նա ամեն ինչով,
Խաղաղ իր քարքրով, նազուն շարժումնքով,
Յեւ իր աչքերով կապուտակ ու ջինջ.
Բնության տված ձիրքերը թովիչ
Զարդարում եր նա նրբին արվեստով.
Կենդանացնում եր տավրով մոզական
Խնճույքները հոխ, ընտանեկական:




Զքնաղ Մարիի ձեռքն ելին փնտռում
 Անթիվ հարուստներ, իշխաններ հայտնի,
 Յեւ շատ քահնէլներ տանջվելով զաղտնի
 Մարիի համար հալ ու մաշ լինում,
 Բայց նա իր հոգում խաղաղ ու անդորր
 Դեռ սեր չգիտեր, Դղյակում իր հոր,
 Իրեն մտերիմ աղջիկների հետ,
 Հանգիստ որերը անկախ ու անհոգ
 Զրվարճության եր նըվիրում նա լոկ:



Վաղու՞ց երբ Յեզի՜նչ, Թաթարների հոծ
Ամբոխն ինչպես զետ Լեհաստան խուժեց.
Զի փռվում արտում հրդեհն հողմարոց
Նույն արագությամբ սոսկալի ու մեծ:






Վորըացավ հանկարծ յերկիրը ծաղկած,
Պատերազմներից դարձավ խեղանդամ:
Անցան զվարճանքն ու կյանքը հանգիստ.
Գյուղեր, անտառներ լուռ են, տրտման խոտ.
Յեվ ամայացավ զդյակը փարթամ:

Լուռ ե Մարիի սննյակն առանձին...
Տան յեկեղեցում, ուր սառն են իրճով
Մատուներ են հանգչում իրենց թագերով
Յեվ իշխանական զինանիշերով,
Կանգնած ե մի նոր գերեզման կրկին...
Հայրը շիրիմում, դուստրը գերիվար,
Ժառանգն ե ժլատ՝ իշխում զդյակին
Ու նրսեմացնում լուծով ծանրագին
Յերկիրն ամայի յեվ անմխիթար:

Բախչիսարայի պալատը, ավա՛ղ,
Թագցնում ե լուռ՝ ջահել դշխունհուն,
Այժմ գերության գրկի մեջ խաղաղ
Թոշնկով՝ Մարին լալիս ե, տխրում:

Խանն և անբախտին սակայն խնայում,
 Հուզում են խանի բուն կարճատև
 Արցունքը նրա, հառաչն անհանգիստ,
 Յնվ նրա հաճար դարձրել և թեթև
 Նա իր հարեմի որևէ բները խիստ:
 Չի այցում կույսին, գիշեր կամ ցերեկ,
 Խանական կանանց խտտաղևմ ծառան,
 Ու իր հոգատար ձեռքերով նրան
 Դեպի մահիճը չի տանում յերբեր:
 Չի համարձակվում յերբեր աղջկան
 Իր վիրավորիչ հայացքը հառել:
 Ու Մարին ծածուկ իր լողարանում,
 Ստրկուհու հետ, մենակ և մեռած:
 Չի համարձակվում խանն իսկ խռովել
 Տխուր հանգիստը իր չքնաղ գերու,
 Ու թույլ և տրված հարեմի հեռու
 Մի բաժնում նրան ապրել միայնակ,
 Յնվ թվում և ալք առանձնարանում
 Թագչում և մի վոչ յերկրային և յակ:
 Գիշեր ու ցերեկ այնտեղ տիրամոր
 Պատկերի առաջ կանթեղ և վառվում,
 Լուսթյան մեջ հույսն ու հավատը խոր,—
 Վշտահար հոգու օփոխանքն ալք,—
 Վաղուց ապրում են այնտեղ միասին
 Յնվ հիշեցնում են սրտին անընդհատ
 Մերձավոր, վրսեմ աշխարհի մասին...






Աղջիկը այնտեղ թափում է արցունք,
Խանդոտ կանանցից հեռու յնվ ծածուկ:
Յեւ վ մինչ թաղված է չորս կողմն ամեն ինչ
Հիմա հեշտանքում այն խելացնոր,
Հրաշքով ազատված անկյունն հեռավոր
Պահպանում է խիստ սրբությունը ջինջ:
Այսպես եւ սիրտը մոլության զոհի
Հափշտակության մեջ եւ ախտակիրք
Պահպանում է միշտ մի սուրբ յերաշխիք,
Մարուք զգացմունք մի աստվածային...

* * * * *

Իջավ գիշերը. ծածկվեցին մութով
Տափրիկյան դաշտերն, ահա, բաղցրաթով.
Սոխակի յերգն եմ լսում յես հեռվում,
Դափնեծառերի խաղաղ հովանում:
Լուսինն ե ծագում աստղերի խմբով
Ու արևում իր խոնջ շողերը չորս դին՝
Մութ անտառներին, լեռներին, հովտին,
Պարուրված իրենց ճերմակ քողերով,
Ստվերների պես թեթևիվ, վնասվետուն,
Անցնում են շտապ հա տնից տուն
Բախչիսարայի փողոցներով նեղ
Պարզ թաթարների կանայք, վոր մեկտեղ
Կիսեն իրիկվա ժամերը անբուն,
Լուսնի պալատը. հեշտանքի գրկում




Հարեմը մտալ անխռով, խոր նինջ,
Ու չի խանգարում այս ժամին վոչինչ
Գիշերը խաղաղ, Զննել եւ չորս կողմ
Պահակն հուսալի, զգաստ ներքինին,
Քնած եւ նա այժմ, բայց ահր կրկին
Տագնապում եւ իր քնահար հոգին,
Դավաճանության եւ նա միշտ սպասում,
Վոր իրեն հոգուն հանգիստ չի տալիս.
Թվում եւ հաճախ ինչ վոր փափսուկ,
Ինչ վոր խշխշոց, ճիւղեր եւ լսում
Ու իրեն խաբող ձայնը լսելիս
Արթնանում եւ նա, դողում ու ելի
Լսելիքն եւ սուր ժարսափած լարում.
Բայց լուռ եւ չորս դին, լուռ ու հեշտալի,
Միայն մարմարյա խորքից՝ քաղցրածայն
Շատրվաններն են ղեպի վեր զարկում,
Յեւ իր սիրելի վարդից անբաժան
Սոխակն եւ մթնում իր յերգը յերգում,
Յերկար եւ նրանց լսում ներքինին,
Մինչեւ վոր նորից հանձնվի քնին։



Ի՞նչ լավ ու շքեղ և արեվելքի
Մութ գիշերների հմայքը խավար-
Ի՞նչ քաղցր են նրանց ժամերը հոտում
Մարգարեապաշտ այս մարդկանց համար:
Ի՞նչպիսի հեշտանք նրանց տներում,
Այն կախարդական մութ ալգիներում,
Հարեմների մեջ լուռ ու անլուսնոց,
Ուր ամեն մի բան լուսնյակի ներքո
Լի չե լուծվումը, խորին գաղանփով
Յեւլ ներշնչումով մի քաղցրահեշտանք:





Քնած են կանայք: Լոկ մեկն է արթուն:
 Շնչասպառ, տեղից յեղնում է նա վեր:
 Դնում է, ահա, ձեռքով անհամբեր
 Բացում է դուռը: Գիշերվա մթնում
 Նա թեթևվաքայլ առաջ է գնում...
 Դե՛մը, նիրհելով վախկտա, մշտաճոգ,
 Ծնունդ ներբեռնին է ահա պառկել:
 Ա՛խ, սիրտն է նրա անողոր ու պաղ,
 Խաբուսիկ է շատ յեվ բունը խաղաղ...
 Կինը վողու պես՝ անցավ անարգել:

Դուռն էր նըրա դեմ. տարակուսանքով՝
 Ամուր փակին է անաղմուկ դիպչում՝
 Մըթան մեջ նըրա ձեռքը դողդողուն:
 Մտավ, իր շուրջն է դիտում զարմանքով...
 Պատում է նրան ահ խորհրդավոր:
 Ահա կանթեղի լույսը մենավոր,
 Տապանակն ահա թույլ լուսավորված,
 Հեզ կերպարանքը ամբիժ տիրամոր
 Յեվ խաչը՝ սիրո նիշը սրբազան...
 Վողջը, վրացուհի, բո հողում հանկարծ
 Արթնացրեց ինչ վոր հարազատ մի բան
 Յեվ խոսեց նորից վաղուց մոռացված
 Որերի բոլոր հնչյուններով հին:



Դեմը պառկած ե նա՝ իշխանունին,
Յեվ խորունկ քերից կուսական նիրճի
Այտերն են վառվում ու, զեռ ցույց տալով
Հետքերը խոնավ արտասուքների,
Կուսավորված են հողաբերկ ժպտով,
Բը լույսն և տալիս լուսինն ել այդպե՛ս՝
Ծաղկին, ծանրացած անթովի շիթով,
Յեղևի վորդին, հրեշտակը ասես
Յերկնից իջել, սավառնել և վար
Յեվ խոր քնի մեջ արցունք և թափել
Հարեմի անբախտ գերուհու համար,
Ավա՛ղ, բեզ, Զարե՛մ, ի՞նչ և պատահել...
Կուրծքն և կծկրվում նրա վշտահար,
Ծնկներն են ահա ծալվում ակամա,
Յեվ աղոթում ե. «գթա՛ ինձ, գթա՛,
Յեվ մի՛ մերժիր իմ պաղատանքը դու...»,
Յեվ կույսի խաղաղ բունն են ընդհատում
Խոսքերը նըրա, շարժումնք ու հառաչն
Ու իշխանունին ահով իր առաջ
Անժանոթ կնոջ զեմքն և նկատում:






Շփոթված, ձեռքով դողդոջ՝ վարանոտ
 նա վեր ե հանում նրբան ու ասում.
 «Ո՞վ ես... գիշերվա պահին միայնակ
 ի՞նչ ունիս աշտոնդ»։—«Յես յեկա քեզ մոտ,
 Փրկի՛ր ինձ, փրկի՛ր, իմ կյանքում մենակ
 Հույսն ե մնացել ինձ ախուհետեւ...
 Վայելեցի բախտն յերկար ժամանակ,
 Որ-որին յեղա անհող ու թեթեւ,
 Յեւ վաշելքն անցավ ինչպես մի ըստվեր,
 Կործանվում եմ յես. բայց լսիր ինձ, դու.
 Ծնունդ առա յես վոչ աշտոնդ, հեռու,
 Հեռու մի յերկրում... բայց մինչ որս ել դեռ
 Անցած որերի դեպքերը բոլոր
 Հիշողությանս մեջ քանդակված են խոր.
 Յես հիշում եմ մեր լեռներն յերկաքարծ,
 Լեռներում հոսող հեղեղները գիծ,
 Հիշում եմ մեր խիտ անտառներն անանց,
 Ուրիշ որենքներ յեվջաքերը ուրիշ։




Բայց ինչո՞ւ, արդյոք, յեւ իմ վո՞ր բախտից
Թողի հայրենի յեզերքներն իմ այն.
Զր գիտեմ, յես ծովն եմ հիշում միայն
Յեւ մարդուն այնտեղ՝ առազաստներից
Շատ բարձր կանգնած...

Ոտար ելին ինձ
Դեռ մինչեւ հիմա թե՛ վշտեր, թե՛ վախ,
Ու միշտ հարեմի անդորրում խաղաղ,
Եւրա ըստվերում ծաղկում ելի յես
Ու սպասում սրտով հնազանդ յեւ հեզ
Սիրտ առաջին, բաղցր փորձության:
Ըղծերն իմ ծածուկ՝ իրականացան:
Կիրենյն ընտրելով անդորր ու հեշտանք
Թողեց պատերազմն արյունաթաթաւ,
Թողեց սոսկալի ամեն արշաւանք
Յեւ նորից իր լուռ հարեմը մտաւ,





Յեւ թագաւորութիւնսն
Մենք ներկայացանք։ Սրահում լին
Հայացքն իր պայծառ հառել եր նա ինձ,
Ինձ կանչեց իր մօտ... յեւ ալ որովանից,
Անընդհատ հարբած զմայլանքով, մենք
Յերջանիկ ելինք։ Յեւ վոչ մի անգամ
Վոչ բամբասանքը յեւ վոչ ել չարկամ
Խանդի տանջանքը, կասկածները նենգ,
Վոչ ել ծանծրույթը մեզ չեին հուզում.
Մարի՛, հայանվեցիր դու նրբան մի օր.
Ավա՛ղ, ալդ օրից ինչ վօր հանցավոր
Խոհով մռայլվեց նրբա գօտ հողին.
Կազմեանելով Գիրեյն արդեւ ինձ,
Ականջ չի դնում իմ նախատիւրին.
Զանծրանում ե նա իմ ախ ու վախից,
Ըզգացմունքները անցած ու նախկին,
Զրույցներն ինձ հետ՝ ել չկան բնով.
Դու չես մեղաւկից նրբա հանցանքին,
Մեղավոր չես դու, գիտեմ յես ալդ լավ...



Յա՛վ, աշտակս, լսիր, գեղեցիկ եմ յես.
Ումրոջց հարեմում միայն դու յես, վար
կարող ես լինել ինձ վտանգավոր.
Բայց կրբի համար ծնունդ առա յես,
Ձեռ կարող չերբեր դու սիրել ինձ պես,
Ել ինչո՞ւ սառն հմայրով հիմա
Նրբա թուլակամ սիրտն ես տալնապում.
Քոզ ինձ Գիրեյին. միայն իմն և նա,
Այրում և զես ինձ համբույրը նրա.
Տվել և նա ինձ տոկալի չերդում,
Բոլոր րյծերը, ժաբերն իր բոլոր
Իմոնց հետ եր նա վաղուց զուգորդում.
Նա ինձ կապանի դավանանկով...
Կալիս եմ անա յեւ ըտ առաջ, ան՝ս
Ծնրադիր բնկած, յեւ սիրտ չանկով
Քեզ մեղադրել, ազաչում եմ յես —
Հետ տուր իմ խինդն ու հանգեսար կրկին,
Նախկին Գիրեյին դարձյալ դու ինձ տուր...
Մի հակահաստիր դու ինձ վռչնչով.
Նա իմն և միայն, բայց բեզնով և կույր
Արհամարհանքով, խնդրով թե վշտով.
Զրգվեցրու նրբան, ինչով վոր կազես,
Յերդվիր ուրեմն (թեյեւ թողի յես
Խանի կանանց մեջ՝ Ղուրանի սիրուն
Անցած որերի հավատը իմ հին.
Բայց հավատն իմ մոր չեղել և որ նույն
Հավատը) չերդվիր նրբանով իմ զես՝
Գիրեյին նորից յետ տալ Զարեմին...
Բայց լսիր, յեթե պարտավոր եմ քեզ...
... Ապա յես զաշույն բանեցեւի գիտեմ.
Կովկասին մոտ եմ ծնունդ առել յես.




Ասաց ու հանկարծ չքացավ: Մարիան
 Ձի համարձակում հետևեկել նրբան,
 Հասկանալի չե անձեղ աղջրկան
 Տանջահար անող կրքերի յեզուն,
 Բայց ձայնն և նրանց անորոշ լսում
 Յեւ տարապիկի յեւ տարտախ:
 Ի՞նչ արցունք, աղոթք նրան այս անգամ
 Անպատու թշունից պիտի ազատի:
 Ի՞նչ և պատում: Մի՞թե դառնահամ
 Ջահել որերի մնացորդը կարճ՝
 Նա կապրի, վորպես անարգված մի հարճ:
 Ո՛ր, տեր իմ, յեթե Գիրքը համառ
 Թողնեք հեռավոր գնդանի մեջ այս
 Թշվառ աղջրկան, ընդմիջտ մոռանար,
 Յեւ կամ թե հանկարծ մահը վաղահաս
 Ընդհատեր նրբա կյանքը վշտահար,
 Ի՞նչ ուրախությամբ որտեմաւիրա Մարին
 Հրամեշտ պիտի տար տխուր աշխարհին:
 Կյանքի թանկագին պահերն իր համար
 Անցել են արդեն, վաղուց եւ չկան:
 Ի՞նչ ունի կյանքում նա այս անպատ:
 Ժամ և. Մարին, թշվառ աղջկան
 Անա, կանչում են ժպտով հարազատ
 Գեպի գիրկն յերկնի—խաղաղ ու ազատ:


Սլացան սրեր. չկա Մարիան,
Մի ակնթարթում փորբուհին մարեց,
Աշխարհն րդձալի նա լուսավորեց
Այնտեղ՝ մի նորեկ հրեշտակի նման,
Բայց ի՞նչր դազաղ մըտցրեց նըրան.
Անհույս գերութիւն զի՞շտը, թե անբուժ
Մի հիվանդութիւնն, կամ աղե՞ւտ մի ալլ.
Ով գիտե, Չկա ել Մարին ընթուշ:



Ամալի դարձա՛յ պալատը մոռալլ,
 Գիրեյը դաժան՝ այն թողեց դարձալ
 Ու առած նորից ամբոխն իր թաթար
 Արշապեց չարկամ դեպի հողն ոտար:
 Ռազմի փոթորկում նա քառասորոյ
 Յեւ արշունքառչա թռչում է տրտում,
 Բաշց կա թագնորված միշտ խանի սրտում
 Ուրիշ հույզերի կրակն անսփոփ:
 Հաճախ մարտերում աչն սրնասական
 Քուրն է բաշում նա չեւ զարկի ժամին
 Մնում է անշարս, կանգնում է հանկարծ,
 Ապա խեղանեղ նայում է չորս դին,
 Նետում է զոչնը առես սարսափած,
 Ինքն իրեն ինչ փոր բան է փախում,
 Յեւ արաստուքն է գետի պես հոսում:



Արդեն մոտացիւմ ու արամարնիւմ՝
 Հարեմը վաղուց չի տեսնում խանին:
 Յե՛վ կանաչքն աշնանդ տանջանքի արբիւմ,
 Ենթինու սառն ճակդով իյան տալ:
 Պատվում են յառ: Չկա վրացունին
 Վաղուց նրբանց մեջ: Չքերի անտակ
 Անդունդի խորքը նշանցին նրան՝
 Մի որ հարեմի պահակներն անձայն:




Յերբ իշխանունին մեռավ, աշն գիշեր
 Ավարտվեց նրբա կյանքն ել տանջալի:
 Վորբան ել ճանցանքն աշն խոշոր լինեք,
 Պատիժը դարձչալ մեծ եր, սոսկալի:





Մասնելով ռազմի հրո ճարակին
Կովկասին մոտիկ յերկրներ բազում,
Ռուսիայի խաղաղ գյուղերը, կրկին
Խանը հետ դարձավ հողը Տավրիկյան
Յեվ իր պալատի մի անջատ մասում՝
Մարիի տխուր, ջինջ հիշատակին
Շինեց մարմարյա մի մեծ շատրվան:
Վերեվում կա խաչ, շուրջը՝ միասին
Կա մահմեդական մի կիսալուսին:
(Խորհրդանիշն այդ, համարձակ անշուշտ,
Հանցանքն և խղճուկ անիմացության):
Կա մի մակագիր, գեռ չեն հարթել այն,
Ու գեռ չեն կրճել տարիներն անկուշտ
Յեվ այդ գրության գծերով ոտար
Ջուրն և մարմարում ճողփում անդադար,
Սառն արցունք դարձած կաթում հատակին,
Յեվ չի սպառնձվում, չի լռում յերբեր:
Այդպես և վողրում մայրը վշտարեկ
Պատերազմի մեջ ընկած զավակին:
Այն յերկրում ջահել կույսերն ու կանայք
Իմացան մի որ այդ գրույցը հին
Յեվ հուշարձանի անունը նրանք
ԱՐՏԱՍՈՒՎԵՆԵՐԻ ՇԱՏՐՎԱՆ գրին:



Թողած վերջապես հյուսիսը նետվում,
 Մոռացած խնճուղք, ուրախ կերտ խում,
 Յևա այցելեցի Բախչիսարայի
 Վաղուց մոռացված պալատն ամառի:
 Լուս միջանցքներով շրջեցի այնտեղ,
 Ուր այն թաթարը, մարական ազգերի,
 Խրախճանքներ եր սարքում խելահեղ,
 Յեվ թողած սարսափն արշավանքների,
 Թաղվում ձուլության գրկի մեջ շրեղ:

Հեշտանքն և շնչում մինչ այսոր ել դեռ
 Դատարկ պարտիզում չեմ սննդակներում:
 Ջրերն են ցայտում, վառվում վարդեր,
 Խաղողի վազերն են վեր վոլորվում,
 Յեվ դեռ պատերին շողում և վռակին:
 Յև տեսա խարխուլ, հին ցանկապատեր,
 Վորսնց յեանվում, իրենց գարունին,
 Համրելով իրենց թաղքեմները սաթ
 Ախ ելին բաշում կիներն անազատ:

Յեղա խանական զերեզմանոցում,
Տերերի վերջին աչդ ոթնվառում,
Տապանասյուներն աշտեղ՝ պրտավաճ
Մարմարաբանդակ ներմակ չալմայով,
Թվում էր մի պահ՝ լսելի ծալնով
Բախտի պատգամն են հաղորդում մարդկանց,
Ու՞ր են խաները չեմ հարեմք ո՞ւր,
Խաղաղ և չորս զին, ամեն ինչ տխուր,
Փոխվեց ամեն ինչ՝ բայց այն ժամանակ
Դրանցով չեր այնտեղ բնավ սիրտս լի,
Շատրվանների ծալնն ու բուրալի
Շունչը վարդերի հակում էլին ինձ
Դեպի մոռացում, միայն ակամաչից
Տրվում էր հուզման մի անմկնկնի,
Յեւ սավառնաթիվ մի ուրու դարձած
Կույան էր հայտնվում այնտեղ, իմ զիմաց։


Ո՞ր բալեկամներ, ասացիք, լին ու՞մ
Հայացքը տեսա, քիև ու՞մ բնբշալի
Կերպարանքն էր ինձ այնտեղ նետվում
Անխուսափելի չեմ անվանելի,
Արդյոք Մարիի հոգի՞ն էր մարտը,
Վոր մունջ հայտնվեց այնտեղ իմ զիմաց,
Թե Զարեմն էր այն՝ խանդով բռնված
Շրջում հարեմում ամալի չեմ լուս։

Հիշում եմ հայացքն այնքան սիրելի
Յեւ գեղը նրա գետնի յերկրային






Յերկրագնդով լոկ անդորր կյանքին
Յեւ մուսաներին, թողած փառք ու սեր,
Ո՛ր շուտով, շուտով կտեսնեն կրկին
Յեւ ձեզ, Սալգիրի խնդառատ ափեր:
Լցված հաշերով իմ խորհրդավոր
Կեյնեմ յեռների լանջը կապտալուրթ,
Յեւ կուրախացնեն հայացքս անհագուրդ
Տավրիկյան ջրերն աշտեղ նորից նոր:
Մոզական յերկիր, բերկրանք աչքերի!
Աշխուժ են աշտեղ ղյուր թե անտառ,
Սաթը խաղողի, հակենթները վառ,





Հմայքն հյուըընկալ հովտադաշտերի,
Զոհը յն՛վ ջրի յն՛վ բարդինների.
Վողջը անցորդին իր մոտ և կանչում,
Յերը առավոտվա ժամին անխըռով,
Լեռների վրրա, առափնյա համբով
Նրա բաջընտել ձին և սրլանում,
Յնվ կանաչավուն ջրերն իր դիմաց.
Այտ-Դադ լեռան ժայռերին փարած
Յնվ շողում են վառ յնվ աղմուկ հանում...



Պատասխանատու խմբադիր՝ Ն. Զարբան.—Տեխնի-
կական խմբադիր՝ Լ. Ուսանյան. — Սրբադրեհ
Ս. Շահբադյան.—Նկարները՝ Վարդգես Սու-
րենյանի.—Վազմը, տխրաստեղծերը և շմուց-
տխուրը՝ Ա. Ղարբրյանի.—Վիճադրական նկա-
րեհ՝ Յև. Դանչոյ։ Պատկեր Ն 81. Հրատ. Ն 3947.
Գրադիտի լեզուր Կ—1178. Տիրաւ 3000։ Յերևան,
Պետհրատի տպարան, 11 Կոունյանցի, Ն 4.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0064170

280

ЦЕНА

III
1545

оптимально